




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ


ՏԱՍՆՕՐԵԱՅ


Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական,
եւ Մանկավարժական



1901 ՆՈՅԵՄԲԵՐ 20 — ԹԻԻ 4

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ






Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 4

20 ՆՈՅԵՄԲԵՐ 1901



ՏԱՐԵԴԱՐՁ ԾՆՆԴԵԱՆ
ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ
ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹՈՒՐՔԻՈՅ



Հա վերադարձաւ այն տօնական ու հանդիսաւոր օրերէն մին, ուր Օսմանեան ընդարձակածաւալ Կայսրութեան բազմամիլիոն հպատակներն իրենց բարձրագոյն պատուոյ, սրտագին համակրանաց եւ ջերմագին հաւատարմութեան առհաւատչեայ զգացումներն ու մտածումներ, ամեն լեզուէ, ամենէ փայլուն ձևով, ամենէ աւելի պերճախօս ցոյցերով վերանորոգելու բիւրապատիկ բերկրալի առիթ մ'աւելի կ'ունենան, նկատմամբ իրենց լուսամիտ ու ժողովրդասէր մեծազօր Կայսեր՝ որ իր ինքնակալութենէն ի վեր՝ երկիրը քաղաքակրթելու, ժողովուրդը զարգացնելու, իր ամեն հպա-

տակները սիրաշահելու, խաղաղ երջանիկ ապրեցնելու, եւ զանոնք իր ահեղադոր հրամանաց համեմատ՝ կայսրօրէն վարելու համար, չի խնայեց ո՛չ ջանք, ո՛չ գանձ, ո՛չ հանճար: Գերմարդկային ճիգեր թափեց գտնելու եւ դործագրելու համար Տէրութեանց՝ անոնց ամէն ձեռնարկներու մէջ յաջողելու, եւ անոնց պատկառանք, ահեղութիւն եւ համակրանք իսկ ներշնչելու գաղտնիքն եղող եւ միջոցն հանդիսացող գլխաւոր ուժերը՝ այն է գանձը, բանակը ու նաւատորմիդը:

Տարուէ տարի երկրին հարստութեան աղբիւրներն եղող վաճառականութեան, երկրագործութեան, արհեստագործութեան եւ քաղաքակրթութեան բարիքները իր միլիոնաւոր հպատակաց աւելի վայելել տալու համար ընդարձակեց երկաթուղիները, խոճողիները, քարափները, հեռագրական թելերը: Բազմապատկեց առեւտրական, գիտական, մարդասիրական, կրթական, իր ժողովրդոց նիւթական թէ բարոյական օգտին ծառայող՝ եւ անոնց բարօրութեան նպաստող հանրային հաստատութիւնները, տնտեսագիտական ձեռնարկները, եւ քաջալերեց ու վարձատրեց զանոնք օր քան դօր աւելի ծաղկեցնելու համար եղած միջոցները, եւ զանոնք վարելու համար հաստատուած մարմինները:

Այնպէս որ Վեհ. Սուլթան Համիտ Բ. ի Կայսերական Մշնդեան տօնի ամէն նոր տարեդարձի կատարումը Թուրքիոյ վերածնութեան ու քաղաքակրթութեան նոր տօնահանդէսը կատարելու փառաւորումն է:

Նորին Վեհափառութիւնը՝ իբրեւ եւրոպական, ասիական եւ ամերիկեան՝ երկցս ընդարձակածաւայ Կայսրութեան վեհապետ՝ ինչպէս որ իր այդ աշխարհաց մէջ իրեն դրացի Պետութեանց պատիւ բերող, փառքն աւելցնող եւ ոյժ տուող ամէն կարգի հանրագումար ու բարենպատակ հաստատութիւններն ինքն եւս Թուրքիոյ մէջ ալ ծաղկեցուց, նոյնպէս եւ անոնց ամէն սեռի յառաջադիմութեանց փափաքող միշտ քաջալերեց մարդկային մտքի զարգացման մեծ ազգակն եղող Մամուլն ու Տպագրութիւնը: Անոր համար է որ այսօր Թուրքիոյ մէջ ամէն ազգի մամուլ՝ եւ անոնց մէջ նամանաւանդ հայ մամուլը մեծ խանդավառութեամբ միաջնելով իր ձայնը հանդիսական համերգին՝ առ Նորին Վեհափառութիւն տաժած հաւատարմական, երախտագիտական, եռանդուն զգացումներն իր մէջ համառօտող արքայական մեծ ու նուիրական մաղթանքն ինքն եւս կը կատարէ բացազանչելով ի խորոց սրտէ՝ հազար ապրի՝ մեծանուն ու մեծազօր ՓԱՏԻՇԱՀԸ՝ ՍՈՒԼՏԱՆ ՀԱՄԻՏ Բ.



ԱՐՄԱՇԻ ՎԱՆՔԸ

Մեր սգալիկ ընթերցողները կարելի է գիտեն թէ Պոլիսէն շոգեկառքով քանի մը ժամ հեռու է Նիկոմիդիա քաղաքը որ իզմիտի ծոցին վրայ գեղեցիկ քաղաք մ'է ամփիթատրոնի ձեռով: Բայց գուցէ չեն այցելած Նիկոմիդիայէն 5 ժամ հեռու Արմաշ հայաբնակ գիւղը եւ համանուն վանքը՝ որ ունի Զարիստիան Ս. Աստուածածին անունով եկեղեցի մը: Այդ վանքը գեղին վերելք շատ գեղեցիկ ու բարձրահայեաց դիրք ունի, եւ ուխտաւորներուն համար հաճելի անակնկալ մ'է, լեռներէ ու ձորերէ անցնելէ վերջ, հեռուէն յանկարծ. նշմարել վանքին

սպիտակ, քարաշէն յարկերն ու եկեղեցիին զանգակատունը:

Այդ վանքը, վերջին քանի մը տարիներուն մէջ, շատ օգտակար հաստատութիւն մը դարձաւ, ծաղկեցնելով իր ժառանգաւորի վարժարանը ուրկէ վարդապետներ կ'ելլեն՝ մեր մէջ կրօնական ու բարոյական հոգեշահ սերմեր, քրիստոնէութեան ոգի եւ գրականութեան սէր ծաւալելու: Վարդապետները պիտի քարոզեն ու սորվեցնեն ժողովուրդին՝ Ս. Աւետարանը. եւ գրել կարդալու փափաք պիտի արթնցնեն հայ-քրիստոնեայ մանուկներուն մէջ:

★.

Պզտիկ տղաքներ, ըսէ՛ք ձեր հայրիկին

որ ձեզ ալ Արմաշ տանի որպէս զի տես-
նէք Արմաշն ու ժառանգաւոր տղաքը որ
գաւառներէն եկած՝ հոն կը դաստիա-
րակուին ու օր մ'ալ վարդապետ պիտի ըլ-
լան։ Հիմակ, անոնք ալ ձեզի պէս կ'աշ-
խատին, դաս կ'առնեն որպէս զի ուսում-
նական վարդապետներ ըլլան։ Անոնք վերջը
ժողովուրդին Առաջնորդ պիտի ըլլան, վի-
ճակներ պիտի հովուեն կրօնապէս։

* * *

Ուրախ պիտի ըլլաք անշուշտ խմանալով
որ այդ վանքը ունի չէնք շնորհք վարժա-
րան մը, ունի նաեւ կանոնաւոր վանական
վարչութիւն մը որ խաղաղիկ կ'աշխատի
թէ՛ եկեղեցիին բարեգալութեան եւ թէ՛
վարժարանին բարեկարգութեան։

Ի՞նչ հաճելի է լսել, առտու իրիկու,
այդ գեղջուկ մենութեան մէջ, Չարխաւիա-
նի դանգակը որ աղօթքի կը հրաւիրէ վա-
նականները, ժառանգաւորները եւ գեղին
մարդիկը։

Տղաքը եռանդով կ'աշխատին իրենց միտ-
քը լուսաւորելու, եւ շատ չափաւոր ծախ-
քով մը, որ կը հոգացուի ուխտաւորներու
բարեպաշտական նուէրներով, հոն սակա-
ւապէտ կեանք մը կը վարեն, առտու իրի-
կու հաւաքուելով վանական պարզուկ ու չո-
րաբեկ սեղանին շուրջը։

Իբրեւ հոգեւոր յիշատակ մը, հոս ձեզի
կը ներկայացնեմ Տէրունական Աղօթքը զոր
կերպէն ժառանգաւորները։ Վանահայր Ե-
ղիշէ Եպիսկոպոսն է զայն գեղեցիկ բանաս-
տեղծութեան մը վերածողը եւ կ'արժէ որ
դուք ալ սորվիք ու երգէք(*):

Ս. ԴԱԻԹԵԱՆ

ՄԱՂՔԱՆՔ

Ո՛վ մեր հայր, որ երկնից մեջ ես,

Թող սուրբ ըլլայ (3 անգամ)

Քու վեհ անունդ յաւերժապէս երկրի վրայ։

Ու քու արխայութեանդ փառով

Լոյս տուր հոգւոց ապահով

Եւ մեզ մօտեցուր անոնց աշխարհին

Մըծելու ցօղը երկնային։

Ո՛վ մեր հայր որ երկնից մեջ ես,

Թող միշտ ըլլայ (3 անգամ)

[*] « Ո՛վ ծիծեռնակ, վարանած Թռչնակ » եր-
գին վրայ տաղաչափուած է այս Մաղթանքը։

Քու սուրբ կամքդ նւարհապէս երկրի վրայ
Եւ քու բարութեամբդ առասաւեռոհ

Հաց տուր հիգաց ամէն օր

Եւ զմեզ մօտեցուր անմահ սեղանիդ

Իբր հրաբիրեալներ աներկմիտ։

Ո՛վ մեր հայր դու մեր պարտեաց նոր

Շնորհէ միշտ դու (3 անգամ)

Ինչպէս մեմ ալ պատրաստ եմք այլոց թողուլ

Եւ քու արքայութեանդ ի սաս

Տուր մեզ սէր եւ սիրտ բզգաս,

Եւ մեզ մօտեցուր այն ուղիղ ճամբուն

Ջուր ցոյց կուտաս ամենուն։

1 Հոկ. 1901, Արմաշ

ԵՂԻՇԷ ԵՊՍԿՈՒՊՈՍ



Ա Ր Ո Ւ Ս

Իբրեւ մայիսի քարմ ծաղիկներ,

Մանկունք դպրոց էին ժողվեր.

Սեւ ու ծաւի աչքերուն մեջ

Կարծես դրուած էր արժի մ'եջ։

Փոքր ճակասներ՝ հակած սիրուն՝

Կը նայէին պատկերներուն.

Հմայքն այսերեկն կը կաթէր վար,

Անոնք էին խիղիի բուրվառ։

Ծաղիկն ուներ թոյր երփնագեղ,

Թռչունս ուներ շաշուն գեղգեղ,

Արուս ուներ լեզու թովիչ

Եւ արժաքեայ աղուոր գրիչ։

ՎԱՐԴ



Ժ Ա Ն Ն Օ Թ

ԿԱՄ

Բ Ա Ղ Դ Ի Ն Ժ Պ Ի Տ Է



Ատենօք հարուստ վաճառական մը կար
որ մէկ հատիկ մանչ զաւակ մը ունէր, աշ-
խարհիս ամէնէն լաւագոյն տղան, որ սա-
կայն յետին ծայր պարզամիտ էր։

Հայրը շատ անգամներ փորձած էր ա-
նիկա արհեստի մը, գործի մը տէր ընել.
Բայց տղան արհեստներէ և ոչ մին իր ճա-
շակին յարմար կը գտնէր. մէկ խօսքով

առեւտուրի անյարմար էր: Դրամ կամ ապրանք իրեն համար կարեւորութիւն, արժէք չունենալով բնաւ չէր բռնէր: Իրեն համար խաղալիկ մը ունի գլումէն աւելի թանկագին էր: Հայրը՝ որ այլեւս յուսահատած էր՝ կ'ըսէր թէ օրին մէկը հիւանդանոցը պիտի մեռնի խեղճ ու թշուառ. շատ անգամ ծեծ



ալ կը քաշէր անոր. այն ատեն դրացիներն ու բարեկամները կ'ստիպուէին միջամտել և յոյս կուտային հօրը թէ տղան մեծնալուն անշուշտ այդպէս չպիտի մնար: Օրերը կ'անցնէին, սակայն տղուն գլուխը խելք գալիք չունէր:

Օր մը վաճառականը տղան իրեն կանչելով կ'ըսէ.

« Ժանօթ, վերջապէս ա՛լ ժամանակն է որ բան մը ընես: Կ'ուզեմ որ օր մը ինծի յաջորդես եւ թէ գործի մը ձեռնամուխ ըլլաս: Ա՛ռ, ահա ասիկ հարիւր սկուտ: Մօտակայ քաղաքը տօնավաճառ տեղի կ'ունենայ, Գնա՛ այս ստակով կերպասներ գնէ և ջանա՛ խելացիութիւնդ ցոյց տալ, որովհետեւ այս ընթացքդ անսպասուաբար է ինձ՝ մարդոց առջեւ:

— Հայրիկ, ըսաւ Ժանօթ կը խոստանամ թէ գոհ պիտի մնաք ինձմէ և թէ այլեւս անսպասուաբար չպիտի ըլլամ ձեզի:

— Աստուած տայ, սիրելի գաւակս, գնա՛ և հոս հոն ճամբաները բնաւ մի՛ կենար խաղալու, ինչպէս որ սովորութիւնդ է:

Ժանօթ մեկնեցաւ ինքզինքը իր հօրը արժանավայել ցուցնելու հաստատամտութեամբ: Պէտք եղաւ որ անտառէ մը անցնի, Հոն, աղբիւրի մը քով, նստած տեսաւ սիրուն կին մը որ ձեռքը առարկայ մը բռնած ուշի ուշով կը ղննէր:

Ժանօթ մօտեցաւ, տեսաւ որ ոսկեջորեակ մըն էր (կիւլ պէօճէյի, hanneton) կնոջ ձեռքին մէջ՝ ետեւի թաթերուն վրայ

կայնած է և որ պղտիկ կիթաւա մը կը վարնէր Սպանիացիի մը նախաճը դրողելու չափ: Կինը կարծես մեծ հաճոյք կ'ըզարայս տարօրինակ նուագածունն մտիկ ընելով: Ժանօթ ալ ականջ դրաւ և այնչափ յափշտակուեցաւ որ ա՛լ չկրնալով դիմանալ, ըսաւ տիրոջը.

« Տիկին. հրաշալի միջատ մը ունիք ձեռ-



քերնիդ կը հաճի՞ք ինծի ծախել զայն:

— Ո՞րչափ կուղէք վճարել, հարցուց տիկինը:

— Հարիւր սկուտ պատասխանեց Ժանօթ, ունեցածս չունեցածս այս է:

— Առէք այդ գինով, ըսաւ կինը:

Յետոյ տիկինը անասնիկը խոտերով և տերեւներով ծածկուած տուփի մը մէջ տեղաւորելով Ժանօթին ներկայացուց, որ ի փոխարէն տուաւ հարիւր սկուտը ա՛յնպէս ինչպէս որ հայրը իրեն յանձնած էր: « Չմոռնաք, ըսաւ կինը, որ ոսկեջորեակին նուագելը ուզած ատեննիդ Փառապալ ըսէք անոր:

— Ս.յդ բաւական է տիկին, ըսաւ տղան և բաժնուեցաւ: »

Ժանօթ ճամբան տասն անգամ կանգ առաւ ներով տուփը բանալէ և քառապալ ըսելէ ետք տուն վերադարձաւ անհոգ, անտարբեր:

« Է՛յ նայինք, ըսաւ հայրը, աղէկ առուտուր մը կը ցա՞ր ընել:

— Ընտրեալագոյնը, հայրիկ, ըսաւ Ժանօթ, հարիւր սկուտովդ սքանչելիք մը, աշխարհի մէկ հրաշալիքը գնեցի:

— Է՛հ ի՞նչ, մարդբոտայեա ոսկեթել կերպաս մը:

— Ամենեւին:

— Մոնկոլներու իշխանին մեկնո՞ցը:

— Շատ հեռու էք:

— Օհօ՛, ըսաւ հայրը հրապուրեալ, Բօտան իշխանուհւոյն երփներանգ չըջագգե՞ստը:

— Այդ ամէնէն աղէկը. ոսկեջորեակ մըն է գնած» որ կիրառաւ կը դարնէ :

Այս խօսքերուն վրայ վաճառականը ապ- չեցաւ մնաց ամպէ ինկածի պէս : Վայրկեան մը կարծեց թէ տղան խելքը փախցուցած է. բայց քիչ վերջը սխալած ըլլալը հասկը- ցաւ տեսնելով սեղանին վրայ ոսկեջորեակ մը որ սքանչելի կերպով կը նուագէր : « Ա- սոր պէս բան մը տեսած ունի՞ք բնաւ. » ը- սաւ Ժանօթ : Նոյն վայրկեանին տղան օ- դին մէջ բարձրացած տեսաւ հօրը բռունցքը



որով կատաղութեամբ հարուածել կուղէր անմեղ անասնիկը : Տղան բռնցի հարուածին դէմ կենալ ուզելով՝ ախանջին կերաւ. և թանկագին ոսկեջորեակը առածին պէս շի- տակ սենեակը փախաւ շտապաւ, ու հոն ա- պահով տեղ մը պահեց :

Վեց ամիս վերջը հայրը կրկին իր սենեակը կանչեց Ժանօթը : « Տղաս, ըսաւ, կ'ուզեմ քեզի ներել այն յիմարութիւնդ որով հար- իւր սկուտի փոխարէն ջնջին միջատ մը ոս- կեջորեակ մը՝ բերիք ինձ կերպասի կամ սըն- դուսի տեղ : Կ'ուզեմ ներել, կ'ըսեմ, սա պայմանաւ սակայն որ սխալմանդ գինը հա- նես : Մտիկ ըրէ. կառքիս գեղեցիկ ձիերէն մէկը մեռաւ, իմացայ որ վերջերս քաղաքը վաճառական մը եկած է որ ընտիր ձիեր կը ծախէ : Ա՛ռ սա հարիւր սկուտը և գնա՛ հաստ մը գնէ : Ընտրէ՛ մեծը և ութեղը : Մէկ խօս- քով, ջանա՛ որ խելացութեամբդ պատիւ բերես ինծի : »

Ժանօթ հարիւր սկուտն առնելով ճամբայ ելաւ, աղբիւրին քովն հասնելով նոյն կնոջ պատահեցաւ նոյն դիրքին մէջ : Այս անգամ իր ճերմակ սիրուն ձեռքին վրայ դրուած ճպուռի մը երգը մտիկ կ'ընէր. Միջատը

ձայները կը դարձնէր Քարինէլիի նման, ելեւէջներ կ'ընէր Կապրիէլիի նման և թըր- թուումներ՝ Ռիւգինիի նման : Ժանօթի խել- քը գլխէն թռած էր. « Ա՛հ, տիկին, կան- չեց, ճպուռդ աշխարհի բոլոր սոխակները կը գերազանցէ : Հաճեցէք ինծի ծախել այդ



աստուածային միջատը. կենացս մնացեալ մասը պիտի երջանկացնէք և յաւիտեան ե- րախտապարտ պիտի մնամ ձեզի :

— Ճպուռս, յարեց տիկինը, ծախու չէ թէեւ, սակայն քանի որ խնդիրը երջան- կութեանդ վրայ է, յօժարակամ կը բաժ- նուիմ անկէ. բայց ո՞րչափ պիտի տաք :

— Առա՛ղ, կըղգամ որ աշխարհիս բոլոր ոսկիները անբաւական են ատոր փոխարէն. սակայն եթէ հարիւր սկուտով գոհ մնալու ազնուութիւնն ընէք :

— Առէ՛ք, ըսաւ կինը ժպտելով և անոր երկնցնելով յարդէ վանդակ մը ուր ղետեղ-



ուած էր ճպուռը. « Երբ ուզէք որ երգէ, յարեց տիկինը, միայն էստապի ըսելու էք իրեն :

Ժանօթ վերադառնալուն. « Ձիւն ուր է, հարցուց հայրը : »

— Հայրիկ, պատասխանեց Ժանօթ, մի՛ բարկանաք, հրեշտակի մը նման կ'երգէ :

— Ի՞նչ, ըսաւ վաճառականը, ինծի ձի մը գնեցի՞ր որ կ'երգէ. գարմանալի բան :

Գէթ եթէ ուժեղ և բարեկազմ է, հոգ չէ. բայց ի՞նչ տեսակ ձայն ունի, քեցօ՞ւ, պաւօ՞, քե ֆօնքուապաւօ. որովհետեւ պէտք է գիտնաս թէ ձիու մը սօքուաց ձայնէն չեմ ախորժիր:

— Հիմա պիտի տեսնէք, ըսաւ Ժանօթ, և մատին ծայրովը վանդակին դպչելով. «Օ՛ն, յարեց, ֆառապի՛:»

[Շար.]

Թարգմ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՄԻՐԵԱՆ



ՀԵՐՈՍ ՄԱՆՈՒԿԸ

(ԿԱՂԼԻԿԸ)

Ա.

Այս դէպքը պատահեցաւ 1866 Նոյեմբ. 19ին: Գերմանական թագաւորութեան հարաւային կողմը ուժգին փոթորիկ կար: Սարսափելի հեղեղը անընդհատ տեւեց 20 ժամ: Վտակները դարձան փրփրադէզ գետեր, գետերը ափերէն դուրս ելան և ողողեցին երկիրը մղոններով հեռու:

Այդ դժբաղդ օրուան գիշերը, ժամը 4ին, կաղ տղան, Շարլ Սթրինկէլ, որուն մակդիրն էր «Կաղիկ», ենթացուպերու օգնութեամբ երկաթուղիի պահականոցէն դուրս ելաւ հօրը ընթրիք տանելու: Հայրը երկաթուղիի գծին աքցանող էր, անկէա պիտի հսկէր «Սատանի անցք» կամուրջին: «Սատանի անցք» կոչուածն էր 15-20 մեդր խորութիւն ունեցող ձորակ մը: Կառաչարը պիտի անցնէր այդ ձորակին վրայ ձգուած կամուրջէն որ Սթինկէլի հսկողութեան տակ էր: Կամուրջը երկաթէ էր և հռչակուած էր իբրեւ ամուր և անվտանգ: Ձորակին մէջէն կը վազէր վտակ մը որ հիմա՝ սաստիկ անձրեւէն եղեր էր ահեղ գետ մը:

— Ա՛խ ի՞նչ օդ է, ըսաւ, Աստուած չընէ, եթէ կամուրջէն կամ տախտակամածէն բան մը փրթի...:

Շարլ յիշեց թէ ի՛նչպէս հայրը՝ մեկնած ատեն՝ անուշութեամբ մնաս բարով ըսաւ մօրը, և իրեն ալ պատուիրեց ընթրիք բերել:

Մանուկը զգուշութեամբ առաջ կ'երթար

ծանօթ ճամբով՝ երկաթուղիի գծին այն կողմը, երբեմն հօրը ձայն տալով. բայց հայրը գծին վրայ չէր, կարելի է աւելի կամուրջին մօտ էր:

Հեռուէն անոր ահանջին կը հասնէին՝ երկաթէ կամարներուն զարնուող և բուռն զօրութեամբ խորտակուող ջրի ալիքներուն աղմուկը: Կամուրջն ալ հեռու չէր, ընդամէնը 50 քայլ կը մնար...:

Յանկարծ հեռուէն լսուեցաւ ուժգին պայթում և գղրղիւն:

— Աստուած իմ, միթէ կամուրջն է՝ հայրս հոն ըլլալու է...:

Կաղիկը իսկոյն թողուց ընթրիքը, բոլոր ուժովը վազեց՝ որքան որ կրնային չարժիլ ոտքերը:

Երկիւղէն կը դողար ամբողջ մարմնովը: Արդէն կամուրջին մօտ էր՝ քաջութիւնը կորսնցուց:— Կամուրջին մօտիկ, գծին վրա կեցած էր հօրը ձեռնասայլը (որ գծին վրայ կը բանէր ձեռքի մեքենայով): Սայլակին վրայ էր նշանի կարմիր լապտերը որ ազօտ կը փալփալար չարագուշակ մթութեան մէջ:

— «Հայրի՛կ, հայրի՛կ, ո՞ւր ես, կաղաղակէր Կաղիկը, չիթած չըջելով գետեղրին վրայ, առանց ուշ դարձնելու քամիին՝ որ թուց իր գլխարկը՝ ոչ ալ հեղեղանման անձրեւին որ մինչև ոսկորները թրջած էր գինքը: Վերջապէս կանգ առաւ, նայեցաւ դարաստիկին միւս կողմը... և յանկարծ սթափեցաւ: Եիշեց որ քիչ մը ետքը պիտի անցնի ուղեւորներու կառաչարը:

Չկայ կամուրջը, չկայ նաև պահնորդը որ նշան տալով կարողանայ վտանգին առաջն առնել: Կառաչարը այս մթութեան մէջ կրնար խորտակուիլ, Կաղիկը գիտէր երկաթուղիին բոլոր կանոնները: Երբ հայրը հիւրնտնար, ինք կը կայնէր գծին վրայ՝ դօշակն ու լապտերը ձեռք բռնած: Փոթորիկին գոռումին մէջ, Կաղիկը լսեց վականներուն աղմուկը և զգաց գծին ցնցուիլը:

Կարծես բան մը զինք դրդեց. թռաւ ձեռնասայլին քով, բռնեց մեքենային կոթը, իր ծուռ ոտքերով կրթնեցաւ ձեռնասայլին յատակին, և այնպէս լարեց իր ուժերը որ քիչ կը մնար ջիղերը կտրտուէին: Ձեռնասայլը շարժեցաւ առաջ՝ դէպի կառաչարը:

Քանի մը մեդր առաջ գնալով՝ Կաղիկը չարժեց կարմիր լապտերը և աղաղակեց՝

— Կամուրջը քանդուեցա՛ւ, կամուրջը փլա՛ւ . . . :

Կառաչարը աղմուկով կը սահէր, մշուշին մէջէն փայլեցան շոգեշարժ մեքենային լապտերները :

Կաղիկը գիտէր որ այդ Փշացող հրէշը զինք ջարդուփշուր պիտի ընէ, բայց հարկ էր անոր ընթացքը կասեցնել, և մանուկը անոր դէմ՝ կ'ուղղէր ձեռնասայլը՝ շարժելով լապտերը :

Կառաչարին մեքենայետը, սաստիկ հովին պատճառով, չէր լսեր տղուն յուսահատ աղաղակը : Խոնաւ մշուշին մէջէն ան նըշմարեց լապտերը ա՛յն ատեն միայն՝ երբ արդէն բոլորովին մօտեցեր էր անոր. մեքենայետը խորխորատէն հազիւ 5-10 մեդր հեռու՝ կասեցուց մեքենան :

Բայց կառաչարը, ձեռնասայլին հետ տղան նետած էր գծին միւս կողմը՝ և երբ Կաղիկը դտան, անիկա անշնչացեր էր : . . . :

Բ.

Ճամբորդներուն հրաշքով ազատուելուն լուրը շուտ մը տարածուեցաւ ամէն կողմ :

Օր մը ետքը՝ Կաղիկը կը թաղէին : Դա՛գաղին ետեւէն կ'երթար մայրը, որ մէկ օրուան մէջ կորսնցուց թէ՛ ամուսինը և թէ՛ որդին : Թաղմանը մեծ բազմութիւն էր հաւաքուած շրջակայ գիւղերէն : Ծաղիկներով ծածկուած դագաղը մինչև գերեզման կը տանէին շրջակայ գիւղերու գալուցներուն աշակերտներն ու աշակերտուհիները՝ իբրեւ փոխանորդ երկաթուղիի պահնորդներուն և ծառաներուն :

Երբ քահանան հանգստեան աղօթքը կարդաց, և փոքրիկ գերեզմանը հողով ծածկուեցաւ, գիւղին ալևոր ուսուցիչը առաջ անցաւ ու ըսաւ .

« Բարի՛ մարդիկ, հոգիս կը ցնծայ որ այսքան բազմութիւն հաւաքուեր է պզտիկ տղու մը գերեզմանին շուրջը : Կը նշանակէ որ ամէնքն ալ իմացան թէ ի՛նչ սուրբ գործ կատարեց այս պզտիկը, ամէնքն ալ հասկըցան թէ ի՛նչ մեծ հոգի կար այդ խեղանդամ ու հիւանդոտ մարմնին մէջ : Միայն, ի սէր Աստուծոյ, մի՛ զարմանաք դագաղը զարդարող այս պսակներուն ու ծաղիկներուն համար : Անոր հարկ չեն ասանկ պսակներ ու ծաղիկներ : Երբ ազատուած ճամբորդները տուն կը դառնան, ուր կ'իներն ու երե-

խաները կ'իմանան թէ ի՛նչ վիճակ կըսպասէր իրենց ամուսիններուն ու հայրերուն՝ ուրախութեան արցունք կը թափեն իրենց հարազատները նորէն տեսնելնուն համար : Ահա այդ սրտարուիս արցունքները Կաղիկին գերեզմանին ամենալաւ պսակներն են : Եւ երբ դուք, և կամ ձեզմէ մէկը, ծեր թէ մանուկ, իր կեանքին մէջ, պզտիկ օգնութիւն մը հասցնէ կարօտեալին և թշուառին, իր բարի գործը գերեզմանին ցանկալի ծաղիկը կ'ըլլայ այս մանուկին որ իր եղբայրները սիրեց՝ իր անձէն աւելի, և իր կեանքը զոհեց անոնց համար : »

Աս ըսելով՝ ծերունին դարձաւ Կաղիկին մօրը : Վիշտն ա՛յնպէս խոր վիրաւորեր էր խեղճ կինը որ արցունքը ցամքեր էր աչքերէն : Արձանի պէս կայնած էր՝ չհեռացնելով աչքերը մանուկին գերեզմանէն :

Ծերունին ըսաւ անոր .

« Դեղի միտիթարիչ պէտք չէ, ազնի՛ւ կին, քու վշտիդ միակ օգնականը Աստուած է, ես՝ միայն սա կ'ըսեմ որ դուն որը չմնացիր : Ամուսինդ մեռաւ իր պաշտօնին մէջ, որդիդ ինքզինքը զոհեց մարդերուն սիրուն. սա՛կայն քեզի մնաց մեծ ընտանիք մը, ահա՛ . և ծերունին ցոյց տուաւ շրջապատող յուղարկւորները : Դուն մեզմէ պիտի ստանաս տաք տեղ ու եղբայրական գուրգուրանք : Մենք ամէնքս պիտի աշխատինք որ ո՛չ մէկ բանի կարօտ չըլլաս . . . և իմացի՛ր թէ մեր բոլոր ջանքերը փոքրիկ կաթիլ մ'են այն սիրոյն առջև զոր կ'զգանք դէպի քեզ՝ քու սնուցած զաւկիդ համար :

Ծերունին՝ արտասուալից աչքերով՝ մօտեցաւ Կաղիկին մօրը և զրկեց անիկա : Այս տեղ, առաջին անգամ, թշուառ մօր աչքերուն մէջ փայլեցան արցունքի կաթիլներ, որոնք թեթեւցուցին իր սիրտը ճնշող վիշտը :

Գ.

Գեղին գերեզմանատունը, ուր Կաղիկին մարմինը թաղուած էր, մահուրնէ փրկուածները մոխրագոյն քարետախտակի վրայ փորագրել տուեր էին սա արձանադրութիւնը.

Շարլ Սբիկեկի, 14 տարեկան, մեռաւ դիւցազնի մահով՝ ազատելով 200 մարդու կեանք :

Թարգմ. Ս. Դ.

(Հանդիսարան Բարոյագիտութեան)
Յրձդ Հրատար. Ս. Դաւթեանի

ԾՈՎԱՑԻՆ ՀՐԵՆՆԵՐ

ՈՒԹՈՏՆԵԱՆԵՐ (Ըխթաբօթ)

Գ.

Արխթոթ կը խօսի երկուքուկէս մէթր երկար լոթի (միւրէքէպ պալըղը) մը վրայ՝ Բլին՝ աւելի հեռուն կ'երթայ և 10 մէթր խոշորութեամբ գլխոտն մը կը նկարագրէ, նոր հեղինակ մը կը պատմէ թէ այս գազաններէն մին նաւի մը վրայ յարձակելով ընկղմած է զայն:

Ժամանակակից գիտներ կը ցուցնեն թէ՝



ասոնցմէ շատ աւելի խոշորներն ալ կան: Բէրոն՝ Թասմանիայի ջուրերուն մէջ հանդիպած է լոթի մը որու բազուկը 8 մատնաչափ հաստ և 6-7 ոտք երկար էր: Քուայր և Կայմար Ատլանտեանի մէջ հաւաքեցին նոյն ընտանիքէն կակղամորթի մը մնացորդները, որոնք 100 քիլոկրամէն աւելի կը կշռէին: Հասարակածի մօտերը, Ռան, այս կենդանիներէն հատ մը տեսաւ կարմիր գոյնով և տակառի մը խոշորութեամբ:

1853 նոյեմբեր 30ին, Պույէ, Ալեքսոն լրատար շոգենաւին հրամանատարը, Մատէրա և Թէնէրիֆ կղզիներուն բացերը ա-

հագին ութոտն մը տեսաւ որ ջուրին երեսը կը լողար: Այդ կենդանին 6 մէթր երկայնութիւն ունէր առանց հաշուելու ութը ահագին բազուկները՝ իւրաքանչիւրը 2 մէթր երկայն և ծածկուած ծծիչներով, որոնք գլխուն բոլորտիքը տեսակ մը պսակ կը յօրինէին: Գոյնը՝ կղմինտրի կարմիր էր. բերանը՝ կէս մէթրէն աւելի խոշոր էր. աչքերը՝ գլխուն գազաթին վրայ՝ սոսկալի տեսք մը ունէին. մարմինը՝ իրաճեւ ու մէջտեղը ուռած էր. առ նուազն երկու հազար քիլօ կը կշռէր:

Հրամանատարը աւելի մօտէն դիտելու համար այս ճիւղը, զոր երբեմն ովկէանոսը դուրս կը հանէ մարդիկները սարսափեցնելու համար, կանգ առաւ: Աճապարանօք պատրաստեցին հրացանները, սահուն կապերը, երեքժանիները:

Առաջին գնտակներուն կենդանին միւրրճեցաւ, նաւուն տակէն անցաւ և միւս կողմէն դուրս ելաւ խոշոր բազուկները շարժելով: Նաւագները սկսան անդադար կրակ ընել. գնտակներէն մին ամէնէն արդիւնաւորը եղաւ. յանկարծ գազանը փրփուր ու արիւն փսխել սկսաւ՝ մածուցիկ նիւթ ելաւ հետ մէկտեղ՝ որոնք մուշկի հոտ մը բուրեցին:

Այլ կարելի եղաւ կենդանին մօտենալ և երեքժանի մը արձակել վրան. շուտը ամբողջ մարմինը ծակեց անցաւ և լուղակներուն հանդիպելով կանգ առաւ. այն տեսն փորձեցին նաւը քաշել. արդէն մարմինին մեծ մասը ջուրէն դուրս ելած էր երբ ջուանը՝ միտերը կտրտելով դանակի պէս՝ գազանը նորէն ջուրը ինկաւ: Նաւակով քովը երթալ ու պալէնայի պէս որսալը վտանգաւոր էր, որովհետեւ հոգեվարքի ճիգերուն մէջ կրնար քանի մը նաւագներու կորուստ տալ, ուստի թողուցին որ ինքնիրենը մեռնի և չոգենաւը ճամբան շարունակեց: Այս որսը չորս ժամ տեւած էր:

Դ.

Պ. Պույէրի նկարագրած գլխոտնի մեծութեան անհաւատալիութեան հակառակ՝ իրականութիւնն անհերքելի է:


Պէրկէմի եպիսկոպոսը կը պատմէ թէ նորվեգիացի ձկնորսները՝ երբ շատ բացերը կ'երթան, մանաւանդ ամառուան տաք օրերուն, մէկէն ի մէկ ծովուն խորութիւնը

կը քիչնայ. խորաչափը 80 կամ 100 գրուկաչափի տեղ հազիւ 30 խորութիւն կուտայ: Ձկնորսները այս երեւոյթին վարժուած են, գիտեն որ այդ տեղում քր ձուկերը ամէնէն առատ են, անմիջապէս ուռկանին կը նետեն և լեւի լեցուն վեր կը քաշեն: Սակայն երբ բարձրութիւնը քիչնալ կ'սկսի և շարժուն յատակը վեր կ'ելլայ՝ ձկնորսները վայրկեան մը չեն կորսնցներ. ոճն է որ կ'արթնայ, կը շարժի, ջուրին երեսը կ'ելլէ արեւին տաքնալու: Նաւավարները կը թիավարեն ու կը թիավարեն մինչեւ որ ապահով զգան ինքզինքնին. երբ հեռուն կը հասնին, կանգ կ'առնեն և կը

ե.

Գլխոտներու վրայ եղած պատմութիւններուն մէջ քիչ մը երեւակայութեան տեսածներն ալ կան:

Իտալիոյ ծովեզերքները, Բացցոլիի մօտերը, ութոտն մը այնչափ ձուկ ու խեչափառ կերաւ որ ալ գլուեցաւ ծովէն ալ, անոր առած սնունդներէն ալ: Յամաք տառող ճամբայ մը կը փնտռէ և քաղաքին աղտեղութիւնները ծովը թափող ծակին մէջ կը մանէ: Մթերանոց մը կը հասնի ուր պահուած էր չոր ու աղած ուտելիքներու մեծ պաշար մը ձախուելու համար, կենդան



դիտեն այդ գազանը որու կռնակը մէկուկէս մղոն տեղ կը բռնէ: Ձուկերը յանկարծակիի եկած, մորթին ծալքերուն մէջ փնցած քիչ մը ջուրին մէջ կը տապալակին: Յետոյ կը բարձրանան փայլուն եղջիւրներ, նման նաւու կայմերու. ասոնք են բազուկները, եւ ինչ բազուկ. եթէ նաւու մը հանդիպին՝ վաճէ եկեր անոր: Ժամանակ մը արեւին կենալէն ետքը, գազանը նորէն յատակը կ'իջնէ. այս անգամ վտանգը տարբեր ձեւ մը կ'առնու, սուգած ժամանակ անանկ ահագին քանակութեամբ ջուր կը տեղափոխէ որ կարծես թաթառ մը կը յուզէ ծովը:

նին կ'սկսի մէկիկ մէկիկ սնտուկները կտրել և մէջինները ուտել:

Վաճառականները երբ մթերանոց կը մտնեն կը դարմանան տեսնելով որ շատ մը սնտուկներ կոտրտեր են և մէջինները մէջտեղ չկան, եղածը գողի գործ չէր, որովհետեւ դուռներն ու պատուհաններն անաղարտ էին: Կ'որոշեն որ մէջերնուն ամէնէն անվախը՝ մթերանոցին մէջ պահուած: Գիշերը ութոտնը կուգայ իր սովորական խընջոյքին, փայտէ ու հողէ ամանները կը զրկէ զօրաւոր բազուկներուն մէջ, ուժով մը սեղմելով կը փշրէ ու կը քանդէ և մէ-

ջինները կը լափէ: Մարդը չհամարձակիր մինակը յարձակիլ այս նորատեսիլ գողին վրայ. կը ստակար կենդանիէն որ իրմէ քանի մը անգամ աւելի ուժով էր: Առաւօտուն կը պատմէ ընկերներուն որոնք չեն հաւատար իրեն:

Վերջապէս կ'որոշեն որ ամէնքը մէկէն յարձակին թշնամիին վրայ: Գիշերը կը փակուին տունին մէջ. գողը չուշանար դալու. հապիւ թէ ծակէն դուրս կ'ելլայ, անմիջապէս ճամբան կը կտրուի, պահողները վրան կը նետուին և սուրերով ու դանակներով բազուկները կը կտրեն. շատ մը աշխատելէ ետքը կը յաջողին սպաննել ահագին գաղանը. Այս պատմութեան մէջ զարմանալին սա է որ, վաճառականները ցամաքի վրայ ձուկ որսացած եղան:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ

Գ. ԼՈՒԽԱՆ.

ՅՈՅՆԵՐԸ

ՍՊԱՐՏԱ, ԼԻԳՈՒՐԿՈՍ

ԼԻԳՈՒՐԿՈՍ. — Սպարտաի օրէնսդիր Լիգուրիոսի կողմանէ պաշտօնապէս հրատարակուած դատարարական գրութիւնը թուականով առաջինը և կարելի է ամէնէն կատարեալն ու ամբողջն է՝ հնութեան մեզի յողածներուն մէջէն: Այս գրութիւնը, որ ըրչներէ աւելի, տղան Տէրութեան ձեռքերուն մէջ կը դնէր, և իր ազդեցութիւնը բոլոր Յունաստանի վրայ այնպէս էր որ այս ազգին ամէնէն աւելի մեծ փիլիսոփաներն իսկ չէին կրնար անոր ներգործութենէն խուսափիլ: Արիստոտէլ իսկ, մտքով այնքան ազատ, բոլորովին զերծ չէր անոր տպաւորութենէն:

Հայր մը իր տղան մեծցնելու, կրթելու տէր չէր: Ծնածին պէս իր զաւակը լեւֆէ կոչուած տեղ մը կը տանէին ուր կը ժողվուէին ամէն մէկ ցեղի ամէնէն հինները, հոն՝ մանրագնին կերպով կը քննէին երախան. եթէ բարեկազմ էր, ընդունելի կը համարէին, կը հրամայէին որ զայն սնու-

ցանեն և անոր համար կը նշանակէին իբր ժառանգութիւն՝ երկրին ինը հազար հողի բաժիններէն մին: Իսկ եթէ տեւ կամ տկարակազմ ըլլար, կը հրամայէին որ առնեն տանին ու Տայ գետի կից անդունդի մը մէջ նետեն: Կը մտածէին որ ի ծնէ առողջութիւն և ուժ չունեցող մէկուն ապրիլը, ո՛չ իր անձին՝ ոչ ալ տէրութեանը համար շահաբեր չէ: Դայեակները՝ նորածիններուն կազմուածքը փորձելու համար, երբէք ջուրով չէին լուար, այլ միշտ գինիով. որովհետեւ, կ'ըսէին, անոնք որ լուսնոտային ու հիւանդոտ են՝ այս հեղուկին ուժին չգլխանալով թմրութեան մէջ կ'իյնան ու կը մեռնին. իսկ առողջ կազմուածք ունեցողները գինիէն նոր ուժ մը կ'առնեն և մարմինն աւելի կը զօրանայ:

Ստնտունները՝ իրենք ալ շատ խնամք կը տանէին ու մեծ ճարտարութիւն կը բանեցնէին դանոնք սնուցանելու կերպին մէջ: Ո՛չ միայն երախաները խանձարորի մէջ չէին փաթթեր, այլ ազատ ու հանգիստ դիրքի մը մէջ կը պահէին. կը վարժեցնէին պղտիկները սնունդի կողմանէ փափկակեր չըլլալ, ամենապարզ կերակուրներով գոհանալ, մութին ու միայնութենէ չսարսափիլ, տկարութեան ու վատութեան նշաններ չի ցուցնել: Օտարներն ալ լակեղէնոնացի ստնտուններ կը գնէին իրենց զաւակաց:

Լիգուրիոս չէր ուզած որ Սպարտաի տղաքները վարձկաններու խնամոց յանձնուին: Տղայ մը եթէր տարեկան եղածին պէս, ծնողներու ձեռքէն կ'առնուէր և կը դրուէր յատուկ դասերու մէջ, հասարակաց յատուկ միեւնոյն կարգապահութեամբ մեծնալու և ամէնքը միասին խաղալ ու աշխատիլ գիտնալու համար: Ամէն մէկ դասի պետ կը կարգուէր այն տղան որ ամէնէն հաճախեղ և կռիւներու մէջ ամէնէն կտրիճ հանդիսացած էր: Տղայոց աչքը միշտ իրենց պետին վրայ էր. անոր տուած բոլոր հրամանները կը կատարէին, և անտրուոնջ կը համբերէին իրեն, տուած պատիժներուն: Ծերունիները ներկայ կ'ըլլային անոնց խաղերուն, և յաճախ կռիւ ու վիճաբանութիւն յարուցանող խնդիրներ մէջտեղ կը նետէին, լաւ մը հասկնալու համար անոնց նկարագիրը, դատելու համար անոնց յանդգնութիւնը և տեսնելու համար թէ դժ-

ուարութիւններու առջեւ կ'ընկճին: Գրել կարգալը միայն պէտքի համար կը տրվեցնէին, իրենց կրթութեան մեծագոյն մասը կը կայանար հնազանդիլ, աշխատանքի տուկալ և յարատեւել գիտնալուն մէջ:

Տղաքները քանի տարիքին առնէին, մարմնական մարզանքները աւելի կը խստանային: Գլուխնին ածիլած, միշտ բոպիլ կը պտըտէին: Տասներկու տարեկան եղածնուն պէս այլ եւս բաճկոնակ չէին հագնէր, ամառ ձմեռ պարզ վերարկուով մը կ'անցնէին առանց չապիկի: Միշտ աղտոտ էին, բազնիք բնաւ չէին երթար:

Ամէն մէկ տղայախումբ միեւնոյն սրահին մէջ կը պառկէին խոտէ խշտեակներու վրայ զորս իրենք իրենց ձեռքով կը շինէին եւրոտասի գետեղերքին վրայ բուսած եղէգներու ծայրերով: Այս տանիքին մէջ է որ կտրիճութեան համբաւ վաստկողը կ'անցնէր խումբ մը տղայոց դուրսը և կը վարէր դանոնք ուր որ ուզէր: Ծերերը անոնց քովէն անոնց վրայ կը հսկէին աշալլըօրէն, շարունակ ներկայ կը գտնուէին անոնց մարզանքներուն, անոնց մարտի մրցումներուն և անոնց խաղերուն: Եւ այս հսկողութիւնը ի գործ կը դնէին ո՛չ թէ անխոյթ կերպով այլ անանկ հոգածութեամբ մը որ կարծես թէ իրենք բոլոր տղոց հայրերը եղած ըլլային: Ամէն տեղ ու ամէն վայրկեան պակասութիւն գործող տղան կը գտնէր իրեն վրայ հսկող և դինքը պատժող մէկը:

(Շարունակելի)



ՓՈՒՐԻՒԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՉԲԷՆ ՄԻՆՉԵԻ ՄԵՐ ՕՐԵՐ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Գ.

ՀՆԴԿԱՍՏԱՆ

(Շար. Յոգ քիւն)

Շուրջ երեսունհինգ դարեր առաջ՝ Բէն-ճապի Արիանները տիրեցին Գանգէսի հովիտին՝ մինչեւ Հիմալայա լեռան հիւսիսային կողերէն բղխող Պրահմաբուտրա գետին եւ Գանգէսի իրար խառնուած տեղը: Այս յաղ-

թական Արիանները վերջէն իրարու դէմ կռուեցան. երկու հարիւր յիսուն հազար տողերէ բաղկացած Մանապահրապա կոչուած դիւցազներգութիւնը կը պատմէ այս կռիւները որոնք Վիշնու աստուածին մարդեղացունմի եղող Գրիշնա դիւցազին ձեռք վերջացան: Այս դիւցազներգութիւնը՝ վէտաներուն հետ կրնայ լուսարանել Յունաստանի, Իտալիոյ և Հիւսիսային Եւրոպայի մէջ տարածուող շատ մը կրօնական հաւատալիքներու և նախապաշարումներու ծագումը: Ռամայանա, որ ուրիշ դիւցազներգութիւն մըն է, Հնդկաստանի Թերակղզիին և Սէյլանի տիրող Արիաններու աշխարհակալութեան կը վերաբերի: Ասոր հեղինակը Վալմիքի՝ գրեթէ Հոմերոսի և Վիրգիլիոսի քով կը դասուի:

Հնդկական Պասմութեան մթուքիւնը. — Հնդկաստանի հին գրական պատմութիւնը շատ հարուստ է ուրեմն, բայց իր պատմութիւնը շատ աղքատ է: Քիչ մը բան միայն գիտենք հիւսիսային արեւմտեան երկիրներու մասին. ատեն ատեն պատերազմի պատճառաւ յարաբերութիւն ունեցած են Պարսկաստանի հետ: Այսպէս Գարեհ՝ Ինդոսի աշակղմին տիրեց: Աղեքսանդր սոյն գետին ձախ եղերքը հառաւ եւ կը պատրաստուէր աւելի առաջ քալել՝ մինչեւ Պաղնա ձումաի եւ Գանգէսի գետախառնունքը, երբ զօրաց մէկ ըմբոստութիւնը իբասի գետեղերքին վրայ կեցուց զինքը: Բէնճապի մէջ թողած զօրավարները շուտով վռնտուեցան. բայց աշխարհակալին ժառանգորդը՝ Բակդրիա, Ինդոսի հովիտին մէկ մասը իր ձեռքին մէջ պահել կարողացաւ:

Քրիստոսի թուականը սկսելէն քիչ առաջ կ'ապրէր Վիգրամադիտիա անունով պետ մը, որուն ապարանքը բնակեցաւ Սախունդալա վէպին հեղինակը՝ Բադիտասա: Օգոստոսի ձեռքով եգիպտոսը հպատակեցուելէն յետոյ, Հռովմայեցի վաճառականներ հիմնեցին դրամատուներ Հնդկական թերակղզոյն մէջ, որ իր բնական արտադրութեանց փոխարէն ընդունեց մեծ քանակութեամբ ոսկի եւ արծաթ: Մինչեւ մեր օրերը սոյն առեւտրական հաղորդակցութիւնները շարունակուեցաւ միեւնոյն պայմաններու մէջ:

Տասնհամէկերորդ դարուն Պարսկաստանի

Գաղնէվեան իշխանապետներէն մին՝ Մահմուտ, Հնդկաստան մտցուց իր կրօնքը: Թուրքերուն յաջորդեցին Մոնղոլները, որոց տիրապետները իշխեցին Տէլլիի մէջ մինչեւ վերջին դար: Բարեյուսոյ Գանուելէն ետքը Վասդօ տը Կամա Կալկադա եկաւ: Ասոնցմէ վերջը հասան Լիզպոնի, Ամսդերտամի, Յրանսայի և Անգլիայի վաճառականները: Անգլիացիք վերջապէս գրաւեցին բոլոր Հնդկաստանը և տիրեցին Հիմալայէն մինչև Սէյլան, երկու հարիւր միլիոն հպատակներու վրայ:

Հնդկաց ընկերական դասակարգերը. — Հնդկաց Սուրբ Գիրքերը կը պատմեն թէ Պրահմա մեծ աստուածը՝ Ժողովուրդը բաժնեց չորս Քասդերու կամ դասակարգերու: Պրահմաները կամ քուրմերու դասակարգը, զոր հանեց իր գլխէն, Չադրաները կամ պատերազմիկները՝ իր բազուկներէն, Վախիաները՝ հողագործ ու վաճառական՝ որովայնէն, Սուդրաները կամ արհեստավորները՝ իր ոտքերէն:

Երեք առաջին քասդերը որ աշխարհակալ Արիանները կը ներկայացնէին, տիրող դասակարգերն էին. ասոնց արգելուած էր ամուսնանալ Սուդրաներուն հետ, որոց մէջ խառնուեցան Հնդկաստանի նախկին բնիկները: Այս խառնուրդէն ծնած սերունդը տեսակ մը բարիա կը նկատուէր որ ոչ քաղաքը բնակելու իրաւունք ունէր, ոչ Գանդէսի մէջ կը լուացուէր, ոչ ալ Վէտաները կրնար կարգալ: Հնդկական Վէտաները՝ մեր Աստուածաշունչի պէս սրբազան գիրքեր են, յայտնեալ կրօնքի մեկնիչներն են, որոնք կը պարունակեն ամէն գիտութիւն եւ ամէն իմաստութիւն. ասոնք կարգալու մենաշնորհը միայն քուրմերու վերապահեալ էր:

Պրահմաններն էին միանգամայն թէ՛ քուրմ, թէ՛ բժիշկ, թէ՛ դատաւոր, և ամէն բան: Ասոնք կը տիրապետէին կիսնական սարսափով նոյն իսկ բանաներու կամ իշխաններու վրայ: Պրահմանները իրենց ազդեցութիւնը բարձր բռնելու համար Չադրաներու հետ շատ կռիւներ ունեցան, մինչեւ իննեւորդ դարու վերջերը՝ ուր իրենց յաղթութիւնը կատարեալ եղաւ: Այս ատենն է որ Պրահմանները տուին երկին կազմակերպութիւն մը զոր Հնդկաստան կը պահէ այսօր իսկ՝ գէթ իր գլխաւոր գծերուն մէջ:

Այս կազմակերպութեան պատմութիւնը կը գտնուի Մանուի Օրինաց Գրքին մէջ որ շատ բարձր հնութիւն ունեցող կրօնական եւ քաղաքական օրէքներու հաւաքածոյ մըն է:

[Շար.]

Դ. Ռ. Տ. Ս. Կ. Ա. Ն. Վ. Է. Պ.

Յ. Ի. Ի. Լ. Վ. Է. Բ. Ն.

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն Յոգ քիւեց)

Դ.

— Գնաց, հարցուց Մարթա դրան աղմուկին վրայ դուրս վազելով՝ որ ուժգին գոցուելով ամուղջ տունը դըրդեցուցեր էր:

— Այո՛, պատասխանեցի, գնաց:

— Բայց ճաշը, հարցուց ծերուկ սպասուհին:

— Չպիտի ճաշէ:

— Ընթրի՞քը հապա:

— Չպիտի ընթրէ:

— Ի՞նչպէս, հարցուց Մարթա՝ ձեռքերը միացնելով:

— Ո՛չ, Մարթա, ալ կերակուր չպիտի ուտէ, ոչ ալ տունիները: Հօրեղբայրս մեզի ծով պահել պիտի տայ մինչեւ որ անհասկնալի կախարդագիր մը չկարգայ:

— Յիսուս, անօթութենէ պիտի մեռնինք ուրեմն:

Չհամարձակեցայ հաւաստել թէ հօրեղբորս պէս միտք՝ դրածը ընող մէկուն հեա՛լ ըլլալիքը ատ էր:

Երբ մինակ մնացի, միտք ըրի երթալ Կրաիւպէնը գտնել և ամէն բան անոր պատմել: Բայց ի՞նչպէս տունէն մեկնիլ, հօրեղբայրս կրնար մէկ վայրկեանէն միւսը վերադառնալ: Եթէ ինծի կաշէր, եթէ ուզէր նորէն սկսիլ առջի աշխատութիւնը եւ ես հոն չըլլայի, ի՞նչ պիտի պատահէր այն ատեն: Ամէնէն ազէկը տունը մնալն էր:

Հօրեղբորս մեծ թիկնաթոռին մէջ բազմեցայ, ձեռքերս ճօճելով, գլուխս դէպի ետ կախած: Վառեցի ծխափողս՝ որու վրայ

դիցանոյշ մը նկարուած էր. մտացիր այդ արձանիկը կը դիտէի, որ ծխախոտին մու- խէն կամաց կամաց կը սեւնար: Երբեմն ա- կանջ կուտայի թէ ուանդուղէն վեր մէկը կ'ելլա՞ր. բայց բնաւ ոտքի մը ազմուկ չէի լսեր: Ո՞ւր կրնար ըլլալ արդեօք հօրեղբայրս

լով բառեր կազմել, անկարելի բան: Երկեր- կու, երեքերեք, չորսչորս, վեցվեց առի, տնկարելի էր: Կը մաքաւէի այս անլու- ծիւրի դժուարութեան հանդէպ, գլուխս կը տաքնար, տեսակ մը զգայախաբութեան մատնուած էի. կը խեղդուէի, օդի պէտք



Սր. Կրախպէն խարտեաչ Վիրլանտուհի մըն էր

այս պահուն: Յաղթակա՞ն թէ յուսահատ ետ պիտի դառնար: Ինքնիրենս այս հար- ցումները կ'ընէի եւ ահա մեքենաբար ձեռքս առի քիչ մը առաջուան դրած անհասկնալի տողերս պարունակող թղթի կտորը:

Փորձեցի գիրերը խումբ խումբ առնե-

ունէի. մեքենաբար թուղթի կտորովս սկսայ փշուիլ, այն ձեւով որ մէյմը շիտակ կողմը, մէյ մ'ալ կունկի կողմը դիմացս կուգար:

Ինչ մեծ եղաւ զարմանքս, երբ այն մի- ջոցին ուր թղթին կոնակի կողմէն կը նա- յէի, քանի մը բառեր կրցայ կարդալ.

« Խառնարան , հասնիս » :

Յանկարծ լոյս մը ծագեցաւ մտքիս մէջ . այս քանի մը նշաններով ճշմարտութիւնը գուշակեցի : Այս յիշատակագիրը կարգաւոր համար թուղթին ետեւէն նայել հարկ չկար . կարելի էր ամբողջապէս հեգել այն վիճակին մէջ ուր ինծի գրել տուաւ վարպետս : Դասախօսին բոլոր հաշիւները կ'իրականանային : Գիրերու շարքի մասին մտածածը , գրութեան լեզուի մասին ըրած դիտողութիւնները ճիշդ էին . Ոչինչ բան մը միայն կը պակսէր ծածկագիրը ծայրէ ի ծայր կարգաւոր համար , և այդ ոչինչը ես գտեր էի : Վրդովս զսպեցի , երկու անգամ սենեակին շրջանը ըրի . քիչ մը հանդարտելու համար և եկայ թիկնաթուղթին մէջ ինկայ :

« Կարդանք » : գոչեցի ուժով մը շնչելով : Սեղանին վրայ ծռեցայ , մատերս յաջորդաբար գիրերուն վրայ դրի և բարձր ձայնով հեգեցի ամբողջ նախադասութիւնը՝ առանց կենալու , առանց դեղեւելու ,

Ի՞նչ վախ ի՞նչ սոսկում գրաւեց զիս , սարսափեցայ մնացի : Ի՞նչ , կարդացածս արդէն կատարուած է եղե՞ր , գտնուե՞ր է եղեր անանկ յանդուգն մէկը որ մինչեւ հոն իջեր է . . . :

« Ո՛չ , գոչեցի վեր ցատքելով , ո՛չ , հօրեղբայրս պէտք չէ որ գիտնայ . ասանկ ճամբորդութիւն մը իմացածին պէս ինք ալ պիտի ուզէ հոն երթալ : Հակառակ ամէն դժուարութեան պիտի մեկնի , զիս ալ հետը տանի , և ալ բնաւ ետ չպիտի դառնանք » :

Աննկարագրելի գրգռութեան մը մէջ էի . « Ո՛չ , ո՛չ , այս չպիտի կատարուի գոչեցի ուժգին , կրնայ ըլլալ որ ասդին անդին դարձնելով վերջապէս գաղտնիքը հասկնայ , ուրեմն ջնջենք յիշատակագիրը » :

Վառարանին մէջ քիչ մը կրակ կար . վերան գրած թուղթիս կտորն ու Սաքնիւսէմի մագաղաթը առի և դողդոջուն ձեռքով բռնորն ալ կրակին մէջ ջնջելու վրայ էի , երբ սենեակին դուռը բացուեցաւ : Հօրեղբայրս էր եկողը :

Ե .

Հապիւ ժամանակ ունեցայ չարաբաստիկ յիշատակագիրը սեղանին վրայ դնելու :

Պ . Լիտէնպրօք խիստ մտազբաղ կ'երե-

ւէր , միտքը գրաւող գաղափարը վայրկեան մը դուր չէր տար իրեն . անշուշտ խնդիրը քննած , վերլուծած էր , իր երեւակայութեան ծնած բոլոր միջոցները փորձած էր , և հիմակ կուգար նոր կերպ մը փորձելու :

Արդարեւ թիկնաթուղթին վրայ նստաւ , գրիչը ձեռք առաւ և սկսաւ գրահաշիւի գործողութեան պէս բաներ գրել :

Երեք երկար ժամեր հօրեղբայրս աշխատեցաւ առանց խօսք մը ըսելու , աչքերն իսկ չվերցնելով . գրեց , աւրեց , նորէն գրեց , հազար անգամ ծայրէն սկսաւ , բայց պարպ տեղն էր , ինչու որ ճիշդ լուծումը ես գտած ըլլալով՝ ուրիշ ամէն աշխատութիւն անօգուտ էր :

Սակայն ժամանակը կ'անցնէր , մութը կոխել սկսաւ , կամաց կամաց փողոցին աղմուկները դադրեցան . հօրեղբայրս աշխատութեանը վրայ հակած ո՛չ մէկ բանի ու շաղրութիւն կ'ընէր : Քիչ քիչ քունս կոխեց , բաւական ատեն դիմադրեցի . բայց ի վերջոյ նստարանին մէկ ծայրը քնացայ . մինչդեռ հօրեղբայրս կը գրէր ու կ'աւրէր :

Առաւօտուն երբ արթնցայ , անխոնջիկ հետազօտիչը դեռ կ'աշխատէր : Կարմրեցած աչքերը , աժգոյն այտերը , դողդոջուն մատները բաւական նշաններ էին հասկցնելու թէ մտքի ի՞նչ ճգնութիւններու , ուղեղի ի՞նչ ճիգի մէջ անցուցած էր իր ժամերը :

Մէկ խօսքով , մէկ շարժումով կրնայի քակել երկաթէ այս մամուլը որ իրեն գանկը կը ճգմէր , և եթէ չըրի ատիկա նոյն իսկ հօրեղբորս օգտին համար էր :

— Ո՛չ , ո՛չ , կը կրկնէի ինքնիրենս , չի պիտի խօսիմ : Անպատճառ ան երթալ պիտի ուզէ , զինքը աղէկ կը ճանչնամ : Ո՛չ մէկ բանէ կը համոզուի : Միւս երկրաբաններուն չըրածը ինք ըրած ըլլալու համար կեանքը վրայ տալու պատրաստ է : Եթէ յայտնեմ , Լիտէնպրօք ուսուցչապետը ըսպաննած կ'ըլլամ :

Որոշումս տալով՝ թեւերս ծալեցի եւ սպասեցի : Բայց բան մը միայն հաշուի չէի առած , եւ այն ալ քանի մը ժամէն պատահեցաւ : Երբ Մարթա ուղեց դուռն ելլել եւ շուկայ երթալ՝ դուռը գոյ գտաւ : Մեծ բանալին վերցուած էր կղպանքին վրայէն . անհաշտ հօրեղբորս գործն էր ատիկա՝ երբ առջի օրը՝ պտոյտէն ետ կը դառնար :

ինծի անանկ եկաւ որ՝ առջի իրիկուան ընթրիքիս պէս՝ ճաշ չպիտի ընենք, այսու հանգերձ որոշեցի զիւցաղնական ընթացք մը բռնել եւ անօթութեան հարկին տակ տեղի չտալ:

Հօրեղբայրս միշտ կ'աշխատէր:

Կէս օրին՝ անօթութենէ ներդուիլ սկսայ: Մարթա. կոմացուկ մը՝ դարաւիին մէջ դըտնուած ուտելիքները բոլոր կերեր էր, անանկ որ ինծի բան չէր մնար: Նոյնն չտկարացայ եւ տեսակ մը անձնատիրութիւն համարեցի դէմ դնելու: Ժամը երկուքը եկաւ. ա'լ չափը կ'անցներ կոր, աչքերս խոշոր խոշոր բացուեցան Սկսայ մտածել որ յիշատակագրին պէտք եղածէն աւելի կարեւորութիւն կուտայի, անշուշտ հօրեղբայրս չը պիտի հաւատ ընծայեր անոր, նոյն իսկ եթէ փորձելու ալ ձեռնարկեր՝ կրնայինք բռնի վար դնել զինքը, վերջապէս կրնար ըլլալ որ ինքը գուշակէր պիտակին բանալին եւ իմ ծոմապահութիւնս պարապը երթար: Ուստի որոշեցի ամէն բան ըսել:

Իմացնելու միջոց մը կը փնտռէի, երբ վարպետը ոտք եկաւ, գլխարկը դրաւ եւ դուրս ելլելու պատրաստուեցաւ:

Ինչ, նորէն պիտի երթար ու մեզի տանը մէջ փակէ՞ր: Բնաւ չպիտի ձգէի:

— Հօրեղբայր, ըսի: Չլսեց: — Լիտէնպրօք հօրեղբայր, ըսի աւելի բարձր ձայնով մը:

— Հէ՞, ըրաւ քունէն արթնցող մէկու մը պէս:

— Լա՛ւ ուրեմն, բանալի՞ն:

— Ի՞նչ բանալի, դրա՞նք բանալին:

— Բայց չէ՞, գոչեցի. ծածկաղբին բանալին:

Ուսուցչապետը ակնոցներուն վրայէն ինծի դիտեց, դէմքիս վրայ անշուշտ անսովոր բան մը տեսաւ: Որովհետեւ ձեռքէս բռնեց ուժգին եւ չկարենալով խօսիլ, ակնարկովը հարցաքննեց. ո՛չ մէկ հարցում այսքան բացորոշ կը հասկցուէր:

— Այո՛, բանալին... դիպումա՞ծաւ:

— Ի՞նչ կ'ըսես, գոչեց անպատում յուզումով մը:

— Նայեցէ՛ք, բսի գրած թուղթիս կըտորն իրեն երկնցնելով, կարգացէ՛ք:

— Բայց ասկէ բան մը չելլար, ըսաւ թուղթը ձեռքին մէջ դարձնելով:

— Այո՛ եթէ սկիզբէն սկսիք, իսկ եթէ վերջէն...:

Խօսքս լմնցնելու ասէն չունեցայ, ուսուցչապետը տղազակ մը, մռնչիւն մը արձակեց. մտքին մէջ յեղաշրջում մը յառաջ կուզար. կերպարանափոխուած էր:

— Ա՛խ, սատանորդի Սաքնիւսէմ, գոչեց. ըսել է նախադասութիւնդ առաջուրնէ դարձուցեր էիր: Եւ թուղթին վրայ խնալով՝ աչքերը դարձած, ձայնը դողդոջուն, ամբողջ յիշատակագիրը կարգաց վերջին տառէն սկսելով:

Ահա ի՛նչ էր գրուած.

« Իջիւ Սեֆեյիսի Եօֆուլ խառնուրանի մէջ, ուր կ'իյնայ Սարարիսի շուքի Յուլիսի սկիզբները, եւ, յանդուգն ճամբորդ, Երկրիս կեդրոնը պիտի հասնիս: Ահա ի՛նչ որ կ'աւարեցի: Ահա Սաքնիւսէմ:

[Շար.]

ՋԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՄԱՆԿԱԿԱՆ, ԽԱՂԵՐ

ԿՈՂՈՎԻՆ ՄԷՋ ԻՆԿՈՂ ԳՆԴԱԿՆԵՐԸ

Խաղին մասնակցող տղաքները կարգաւ կը շարունակէին պատէ մը չորս կամ հինգ մէթր հեռու, հետերնին առնելով պէտք եղածին չափ քառօնէ գնդակներ: Պատին միւս կողմը կը դնեն կողով մը, որու մէջ պիտի իյնան նետուած գնդակները:

Խաղը սկսելէ առաջ, սանդուղով մը պատին վրայ կ'ելլեն եւ լաւ մը կը նային կողովը դրուած տեղը: Սկսելու նշանը տրուելուն, ամէն տղայ ձեռքի երկու կամ երեք գնդակները, որոնք առաջուրնէ թուագրուած են, պատին վրայէն կողովին մէջ կը նետէ: Խաղը վերջանալէն յետոյ պատին միւս կողմը կ'անցնին տեսնելու եւ քննելու համար արդիւնքը:

Կողովին մէջ ինկած ամէն գնդակ 100 նիշ կ'արժէ, կողովէն դուրս մնացած եւ ամէնէն մօտ եղողները՝ 50, որոցմէ ետքը եւ կողմերը՝ 20: Աւելի հեռուն ինկողները կորսուած կը համարուին:


Խաղին մէջ յաջողութեան անհրաժեշտ պայման՝ եթէ պատը երկու քուկէս մէթր բարձր է, տղայք պէտք է անկից 4 մէթր հեռու կենան եւ կողովն ալ 25 մէթր հեռու դնեն:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամիս ամսոյ **1ին, 10ին եւ 20ին**

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ		ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ		Տարեկանը	45 դահեկան
Վեցամսեան	20 »			Վեցամսեան	25 »
Եռամսեան	10 »	Կ. ՊՈԼՍ		Եռամսեան	12 1/2 »
ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ		ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՃԱՏՏԷՍԻ		ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	4 բուպի	ԹԻԼ 61		Տարեկանը	10 ձրանք


Չեմք: կը ծախուի հաար 40 փարս:

ՇՆՈՐ ՀԱԿԱԼԻՓ



Հանրագիտակի Հրատարակիչը պարտք մը կը սեպէ շնորհակալութիւն յայտնել Պոլսոյ թէ Գաւառի լրագիրներուն ու ընթերցող հասարակութեան որոնք համակրանք շնորհաւորեցին հանդէսիս վերերեւումը:

Մինչեւ հիմա մեր ձեռնարկին գտած ընդունելութիւնը երախտապարտ կ'ընէ մեզի անոնց նկատմամբ որոնք գիտեն թերթի մը արժէքը կշռել ու միանգամայն քաջալերել:



ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

7. — ՅԻՄՆԱԿԻՆ ԽՈՐՈՎԱԾ ՀՆԴԿԱՀԱԻԸ

Մեր ընթերցողներէն անոնք որ կ'ուզեն Յիմնակի Կիրակին լաւ խորոված հնդկահաւ մը ունենալ, ներկայ թիւով կը հրաճար նենք սոյն համադամր, բայց պէտք է նախ լաբիւրինդոսին մէջ թիւերով նշանակուած տեղերը այցելելով հասնիլ խորովածին եւ զայն առնելով ճաշակել:

8. — ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ




Այն մինչեւ 64 թիւերը սոյն կէտերուն վրայ շարել այնպէս որ՝ թէ՛ հորիզոնական, թէ՛ ուղղահայեաց եւ թէ՛ տրամանկիւններուն ուղղութեամբ գումարենք՝ գումարը լլեւէ 260:



Սիվրի-Հիսար, Մ. Պ. (Բ.). — Հանրագիտակի համար շատ երկար է ձեր « Երկու Որբեր » ը:

Նիկովիդիա, Յ. Տ. Ա. — Հասցէները ղրկելու շնորհ ըրէք: — Հին Ուխտի տպագրութիւնը աւարտած չէ:


Սեբասիա. Մ. Ի. — Ստացանք նամակներդ: Թերթերը պիտի ղրկուին: Զատ նամակ պիտի ընդունիք:



Գաւառի այն տեղերը ուր դեռ գործակալ չունինք, թերթ ստանալ փափաքողները կրնան ուղղակի մեզի ղրկել իրենց բաժնեգիրն: Նամակադրոշմը եւ մանտաբօսդը մեծ դիւրութիւն կուտան այս մասին:

ԱՐՏՕՆԱՏԷՐ — ԽՄԱՌԳՐԱՊԵՏ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳԻԶ — ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
Ն Շ Ա Ն Կ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն



Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, ԷՍԿԻ ԶՍՊԹԻԷ ԶՍՏՏԷՍԻ, ԹԻԻ 61.

Պատիւ ունի ծանուցանել թէ՛ պատրաստ է տպագրել ամենայն խնամօք և մաքրութեամբ պատկերազարդ և թէ՛ առանց պատկերի թուրքերէն, Հայերէն և Ֆրանսերէն լեզուաւ Հանդէսք, Դասագրեանք, Տեղեկագիրք, Հաշուէցոյցք, Շրջաբերականք, Հարսանեաց հրաւիրագիրք, Նամակադրութք, Այցաքարտք, Մահազդք, և այլն:

Տպարանս պատրաստ ունի 2000է աւելի բնագիրտական, բնապատմական, մարմնամարզական, Ս. Գրոց պատմութեան և ամէն տեսակ դասագրեանց յարմար պատկերներ, որոնք ձրի կը տրուին այն Հեղինակաց ու թարգմանչաց՝ որոց գործերն կը յանձնուին իրեն, ու պէտք եղածներն ալ կը փորագրուին ամենայն նրբութեամբ:

Գոհացուցիչ և չափաւոր գին:

Կը խնդրուի Մեծ. Հեղինակներէն և տպագրութեան վերաբերեալ գործ ունեցողներէն որ նախապէս ուղղակի տպարանս դիմեն՝ առանց դրսէն ո՛ր եւ է միջնորդի, որոց շահելիքն ալ իրենք կը վաստկին:

Գաւառներէն եղած յանձնարարութիւնք ճշգրտութեամբ և խնամքով կը կատարուին եթէ արժէքը տրուած հրամանին հետ զրկուի:

ՆՈՐ ԴՊՐՈՑԻ վեցերորդ պրակը լոյս տեսաւ և այս շարթու պիտի զրկուի բաժանորդներուն:

Այս Զ. պրակին մէջ դրուած է նաեւ նիւթերու բաժանումն ու ժամանակացոյցը:

Բաժանորդագիրն է 25 դահեկան:

Դիմել ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ԽՈՐԱՍԱՆՆԵԱՆ ԽԱՆ, ՍԻՐԷՆԻ, Կ. Պոլիս

Թերթին խմբագրութեան ու բաժանորդագրութեան, ամէն տեսակ թղթակցութեան համար դիմել մինակ սոյն հասցէին

نشانه بربریان مطبعه

استانبول اسكى ضبطيه جادهسى نومرو ٦١

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ - ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Էսկի Զապթիյէ Զսսսէսի քիւ 61

NICHAN BERBÉRIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Eski Zabliyé DjaddéssiN. 61

ԱՌԱՋՆՈՐԴ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

ՀԵՂԻՆԱԿ

ՍԻՄՕՆ ԶԷՕՄԼԷՔՃԵԱՆ

(ԺԻՐԱՅՐ ՇԻՐԱԿԱՅԻ)

Անհրաժեշտ ամէն վաճառականի, զրուագրի եւ առուստումով զբաղողներու: Գին Բ. Հատորի 12 դրշ. — Կանխիկ վճարողներու համար զեղչ 15 %:

Դիմել ԹԵՐԹԻՍ հասցէին

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հին Ուխտի (Սրբազան պատմութիւն)	4
Նոր » » »	4
Ծաղկաքաղ (Ընտիր կտորներ ընթերց.)	3
Ֆրանսերէն պատկերազարդ ֆերական	2
Կ. Տէմիրեան էֆ. ի Իրագիտութեան Ամբողջական դասընթացքը:	
Ծաղկաքաղ եկեղեցական պատմութեան	4
Քրիստոնէական (Ս. Խանճեան)	2
Ժողովրդական Տարեցոյց	6
Բուրաստան Մանկանց (Տարեկանը)	10
Աղօթագիրք	10

Հանրագիտակ ձեռքի կը ծախուշի Պոլսոյ մէջ հատոր 40, իսկ զաւառաց մէջ 50 փարսպ: